# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հրավերի պարզաբանման մասին

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն**

**Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4»**

**Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի հիմնադրման օրվան նվիրված տոնական միջոցառումների կազմակերպման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2025 թվականի օգոստոսի 16-ին** ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ **2025 թվականի օգոստոսի 18-ին** տրամադրված պարզաբանումը.

**Հարցադրում 1:** Հարգելի գործընկեր, խնդրում ենք պարզաբանել, Ինչու՞ եք կոնկրետ անուններ նշել բենդերի հետ կապված, եթե այդ օրը Ձեր կողմից նշված բենդերը կամ բենդը չի կարող ելույթ ունենալ (տարբեր պատճառներով), որ բենդերով եք պատկերացնում փոխարինումը, համարժեքը կամ հավասարը! Խնդրում ենք հրավերում կատարել փոփոխություն և թույլ տալ կատարող կազմակերպությանը համարժեք այլ բենդեր, երգիչ, երգչուհիներ ներգրավել համերգային ծրագրում:

**Հարցադրում 2:** Խնդրում ենք տալ պարզաբանում՝ ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4 ծածկագրով հայտարարված հրավերի տեխնիկական բնութագրում մատնանշված կոնկրետ մասնակից արտիստների մասով, այն է՝ Etno Colors, Hayat Project և DJ Dark: Հայտնում ենք ձեզ, որ վերոնշյալ մատնանշումը հակասում է ՀՀ պետական գնումների օրենսգրքի մի շարք հոդվածներին և սահմանափակում է մասնակցությունը:

**Հարցադրում 3:** ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4 ծածկագրով հայտարարված հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված՝ «Պայմանագրի կնքումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարողը ներկայացնում է գրավոր հավաստում համերգի մասնակիցներից (Etno Colors, Hayat Project և DJ Dark) այն մասին, որ վերջիններս պատրաստ են նշված ԱՄՍԱԹՎԻՆ և ԺԱՄԻՆ համապատասխան ելույթային ժամանակահատվածով հանդես գան» ելնելով վերոգրյալից խնդրում ենք տալ պարզաբանում հոկտեմբետի 5 ին կայանալիք գլխավոր համերգի ժամի հետ կապված, քանի որ ձեր կողմից նշված արտիստները հոկտեմբերի 5 ի դրությամբ ունեն ժամային ծանրաբեռնվածություն, հակառակ դեպքում կնքվելիք պայմանագրի տեխնիկական բնութագիրը կարող է դառնալ անիրագործելի:

**Պարզաբանում:** Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի հիմնադրման օրվան նվիրված տոնական միջոցառումների կազմակերպման ծառայությունների տեխնիկական բնութագիրը կազմելիս Պատվիրատուն մրցակցության հավասար պայմաններ է ապահովում հնարավոր մասնակիցների համար և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չի առաջացնում, քանի որ հնարավոր բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն բանակցելու տվյալ երգչախմբերի ներկայացուցիչների հետ և ստանալ հավաստիացում միջոցառմանը մասնակցելու նպատակով: Բացի այդ, գնման առարկայի տեխնիկական բնութագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, քանի որ գնման առարկա հանդիսացող միջոցառումների կազմակերպման ծառայությունների շահառուն հանդիսանում է Չարենցավան համայնքի ազգաբնակչությունը, և բազմաթիվ հարցումների, հանդիպումների, դիմումների, առաջարկությունների և այլնի արդյունքում ազգաբնակչության գերակշիռ մեծամասնության ցանկությունը տվյալ երգչախմբերի ներկայությունն է «Չարենցավանի օր» միջոցառման կազմակերպման շրջանակներում: Միաժամանակ պարզաբանվում է, որ տվյալ երգչախմբերի ելույթները նախատեսվում է 2025 թվականի հոկտեմբերի 05-ին ժամը 18:00-ից 20:00-ն ընկած ժամանակահատվածում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող **Պավել Գաբրեյանին:**

Հեռախոս՝ **093-74-48-26:**

Էլեկտրոնային փոստ՝ **qaxgnumner@mail.ru**:

**«ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով.

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | __________________ *(ստորագրությունը)* | **Սևակ Վարդանյան** |
| **Հանձնաժողովի անդամ՝** | __________________ *(ստորագրությունը)* | **Գառնիկ Բեգլարյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | __________________ *(ստորագրությունը)* | **Պավել Գաբրեյան** |

**ЗАЯВЛЕНИЕ**

**О РАЗЪЯСНЕНИИ ПРИГЛАШЕНИЯ**

**Настоящий текст объявления утвержден решением оценочной комиссии № 2 от 18 августа 2025 года и публикуется в соответствии со статьей 29 Закона РА «О закупках**

**Код процедуры: «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4»**

Оценочная комиссия процедуры закупки под кодом **«ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4»**, организованный с целью приобретения **услуги по организации праздничных мероприятий, посвященных Дню основания города Чаренцаван общины Чаренцаван**, ниже представляет запросы, полученные **16 августа 2025 года** по приглашению с тем же кодом, и разъяснения, предоставленные по этому поводу **18 августа 2025 года**:

**Запрос N 1:** Уважаемый партнёр, просим пояснить, почему вы указали конкретные имена исполнителей, если в этот день названные вами группы или группа не смогут выступить (по разным причинам)? Какими группами вы предполагаете их замену, равноценную или эквивалентную? Просим внести изменения в приглашение и разрешить исполняющей организации привлекать в концертную программу другие равноценные группы, певцов и певиц.

**Запрос N 2:** Просим предоставить разъяснение относительно конкретных артистов, указанных в технической характеристике приглашения, объявленного под кодом «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4», а именно: Etno Colors, Hayat Project и DJ Dark. Сообщаем вам, что вышеуказанное упоминание противоречит ряду статей Закона о государственных закупках РА и ограничивает участие.

**Запрос N 3:** В технической характеристике приглашения под шифром под кодом «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4», предусмотрено: «В течение трёх рабочих дней после заключения договора исполнитель представляет письменное подтверждение от участников концерта (Etno Colors, Hayat Project и DJ Dark) о том, что они готовы выступить в указанную ДАТУ и ВРЕМЯ с соответствующей продолжительностью выступления». Исходя из вышеизложенного, просим дать разъяснение по поводу времени главного концерта, который состоится 5 октября, так как указанные вами артисты по состоянию на 5 октября имеют временную загруженность, в противном случае технические характеристики заключаемого договора могут стать невыполнимыми.

**Разъяснение N 1:** При составлении технической характеристики на услуги по организации праздничных мероприятий, посвящённых Дню основания города Чаренцаван, Заказчик обеспечивает равные условия конкуренции для всех возможных участников и не создаёт необоснованных препятствий для конкуренции, поскольку все потенциальные участники имеют возможность вести переговоры с представителями данных групп и получить подтверждение для участия в мероприятии. Кроме того, технические характеристики предмета закупки объективно обосновано и адекватно той потребности, для удовлетворения которой осуществляется данная закупка, так как бенефициаром услуг по организации мероприятий является население общины Чаренцаван. В результате многочисленных запросов, встреч, обращений, предложений и т. д. желание подавляющего большинства населения - это присутствие данных групп в рамках организации мероприятия «День Чаренцавана». Одновременно разъясняется, что выступления данных групп запланированы 5 октября 2025 года в период с 18:00 до 20:00.

Для получения дополнительной информации, связанной с этим объявлением, вы можете обратиться к координатору закупок **Павлу Габреляну**.

Телефонный номер: **093-74-48-26**

Электронный адрес: **qaxgnumner@mail.ru**:

**Оценойная комиссия по процедуре закупки под кодом «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2025/4»**

| | | |
|---|---|---|
| **Председатель комиссии:** | _______ *(подпись)* | **Севак Варданян** |
| **Член комиссии:** | _______ *(подпись)* | **Гарник Бегларян** |
| **Секретарь комиссии:** | _______ *(подпись)* | **Павел Габрелян** |